նաւոր մտանող 'ի մէջ ժողովրդի, պարտ է լինել ամաւ յիսուն և հինգ ամաց, և եթէ յաւելի բարեգոյն որ ոչ պակաս ամօք քանթէ 55, և ամենայն տեղիս շրջող 'ի յերեսս երկրի որում գտցի կրօնաւոր երիտասարդ հարկաւոր է ըմբռնել նմայ և յանձնել եպիսկոպոսին իւրոյ զի մուծցէ 'ի վանքն իւր միայնակցութեան որում յինքն խոստացեալ կալով մնալ միայնակեաց և կրօնաւոր։

ԳԼՈՒԽ ՅԶԶ.

Ամենայն երից ամաց մի անգամ սովորութիւն լինի հայոց մի և նոյն սարեմտի որ նորոգի նախարարն հայոց 'ի նոր նախարարէ, ելցեն երկոտասան այր խոհեմ, հեզ, երկայնամիտ և հասակաւ լիքն իբր հալևոր առ 'ի դրունս ամենայն վանօրէից կրօնաւորաց և ապաշխարօղաց խընդրել արձակութիւն 'ի առաջնորդէ վանքին և մօրէ ապաշխարօղաց մտանել 'ի վանքս առանձին լսել փափագ սրտից կրօնաւորաց և ապաշխարօղաց, և 'ի միջի նոցա եթէ գտցի որոք կրօնաւոր և ապաշխարօղ որ յատկապէս ցանկայ և կամի ելանել 'ի վանքէն և մտանել յաշխարհ, և ըստ Օրինօք ամուսնանալ, շարեսցեն թուղթ պաղատանաց նորայ առ հայրապետն հայոց ձեռնադրեսցի ելանողն և վկայութեամբ լսող առաքելոյն նախարարի հաստատեալ թուղթն պաղատա-